Տեքստի վերաբերյալ
առաջարկություններով
լրամշակված նախագիծ
14.01.2015թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև 2012թ. հոկտեմբերի 3-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի մասին արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության կառավարությունը, այսուհետև՝ Կողմեր,

ղեկավարվելով 1996թ. սեպտեմբերի 27-ի Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի և ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման ու գործառման համար հողամասերի հանձնման ու օգտագործման կարգի մասին համաձայնագրով (այսուհետ՝ Համաձայնագիր),

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված ռուսաստանյան ռազմակայանի զինվորական կազմավորումների կազմի փոփոխությունը և 2012թ. հոկտեմբերի 3-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի մասին արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը,,

համաձանեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Հայկականմ Կողմը Ռուսական Կողմին է տրամադրում.

N 9 ռազմավանը (քաղաք Գյումրի, Լալայան փողոց)՝ բաղկացած ռուսական եկեղեցու զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասից և դրան հարակից՝ Գյումրի քաղաքի Լալայան փողոցի N 173/3 հասցեի հողամասից (դրանցում առկա շենք-շինություններով)՝ հոգևոր–մշակութային կենտրոն կառուցելու համար:

Հոդված 2

Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերը սահմանվում են Հավելվածի Ցանկին համապատասխան:

Հոդված 3

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի պետությունների ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումն ստանալու ամսաթվից:

Կատարված է_____-ում "_____" _____ 2015թ-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության կառավարության անունից	Ռուսաստանի Դաշնության կառավարության անունից

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև 2012թ. հոկտեմբերի 3-ի՝ Հայաստանի հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի մասին արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին N 2 արձանագրությանը կից

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի

Տեղաբաշխման կետի N	Տեղաբաշխման կետի անվանումը	Գտնվելու վայրը
1.	Ռազմական ավան N 1	ք.Գյումրի, Մեծ բերդ
2.	Ռազմական ավան N 2	**ք.Գյումրի, փող. Աղյուսի**
3.	Ռազմական ավան N 3	ք.Գյումրի, Կարսի խճուղի
4.	Ռազմական ավան N 5	ք.Գյումրի, փող. Բուլվարային
5.	Ռազմական ավան N 6	**ք.Գյումրի, փող. Չերքեզի ձոր**
6.	Ռազմական ավան N 8	ք.Գյումրի, փող. Շիրակացու
7	Ռազմական ավան N 9	ք.Գյումրի, փող. Լալայան
8.	Ռազմական ավան N 2/63	Շիրակի մարզի գ. Նոր Ախուրյան
9.	Ռազմական ավան N 15	ք.Գյումրի, **փող. Սահմանապահների 20**
10.	Ռազմական ավան N 21	**ք.Գյումրի, փող. Ղորղանյան 222**
11.	Ռազմական ավան N 16	ք.Գյումրի, փող. Պիոներական 16
12.	Ռազմական ավան N 4	ք. Երևան, փող. Արշակունյաց
13.	Ռազմական ավան N 5	ք. Երևան, փող. Արշակունյաց

14.	Ռազմական ավան N 6	ք. Երևան, փող. Արշակունյաց
15.	Ռազմական ավան N 7	ք. Երևան, փող. Արշակունյաց
16.	Ռազմական ավան N 1	Շիրակի մարզի գ. Հովունի
17.	Ռազմական ավան N 1	Արագածոտն մարզի գ.Քարվանսարայ
18.	Ռազմական ավան N 61	ք. Երևան, փող. Արարատյան
19.	Ռազմական ավան N 53	ք. Երևան, փող. Շիրակի
20.	Ռազմական ավան N 8	ք. Երևան, փող. Դեկաբրիստների 5, «Դրուժբա» հանրակացարան
21.	Ռազմական ավան N 12	ք. Երևան, փող. Ծարավ-Աղբյուր, «Սպորտ» հանրակա - ցարան
22.	Ռազմական ավան N 59	ք. Երևան, փող. Ծարավ-Աղբյուր 55 Ա, «Սալյուտ» հանրակացարան